



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

2011թ. սեպտեմբերի 22-ին, թիվ 103-Ա
ք.Աշտարակ

**2011ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՊԼԱՆԱՅԻՆ
ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԱՐՅՈՒՆՔՆԵՐՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1998թ. Հոկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետությունում քաղաքաշինական գործունեության պետական վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» թիվ 624 որոշման 14-րդ կետի ե) ենթակետով և հիմք ընդունելով ՀՀ Արագածոտնի մարզպետի 2011 թվականի մարտի 17-ի թիվ 33-Ա կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովի ներկայացրած արձանագրությունները՝ *որոշում է*։

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի՝ Շենավան, Ն.Բազմաբերդ, Երնջատապ, Թային, Ծաղկահովիտ, Նորաշեն, Օրգով, Շամիրամ, Հարթավան, Կաթնաղբյուր, Նիգավան, Կայք, Լեռնապար, Ավան, Գեղաձոր և Աշնակ համայնքների ղեկավարներին՝ վերացնել քաղաքաշինական բնագավառի պլանային ստուգումների արձանագրություններում նշված խախտումները:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Ա.Դավայանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

